Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ (2023-2024 ուստարի)

10-րդ դասարան (տևողությունը՝ 180 րոպե)

ա) Հայոց պատմություն (20 միավոր)

1. Ե՞րբ է Լոռին հայտարարվել «չեզոք գոտի». 0,5 մ.
   ա/ 1918 թ. մայիս բ/ 1918 թ. դեկտմեբեր
   գ/ 1919 թ. հունվար դ/ 1919 թ. նոյեմբեր
2. Ո՞վ է Կարսի կոնֆերանսում գլխավորել հայկական պատվիրակությունը. 0,5 մ.
   ա/ Ալեքսանդր Բեկզադյան բ/ Ասքանազ Մռավյան
   գ/ Սարգիս Կասյան դ/ Պողոս Նուբար
3. Որտե՞ղ է գտնվում Շանիդար հնավայրը. 0,5 մ.
   ա/ Սև ծովի ափին բ/ Աղձնիք աշխարհում
   գ/ Վանա լճի ավազանում դ/ Կորդվաց աշխարհում
4. Որտե՞ղ է գտնվում Մաժակ քաղաքը. 0,5 մ.
   ա/ Ծոփքում բ/ Աղձնիքում
   գ/ Կապադովկիայում դ/ Մծբինում
5. Ո՞վ էր մասնակցում 548 թ. հակաբյուզանդական ապստամբությանը. 0,5 մ.
   ա/ Արտավան Արշակունին բ/ Մուշեղ Մամիկոնյանը
   գ/ Հովհաննես Արշակունին դ/ Վարդան Կրտսերը
6. Ե՞րբ է ավարտվել Զվարթնոց տաճարի շինարարությունը. 0,5 մ.
   ա/ 618 թ. բ/ 643 թ. գ/ 661 թ. դ/ 683 թ.
7. Ո՞ր դարում է կործանվել Սասանյան պարսկական տերությունը. 0,5 մ.
   ա/ 3-րդ բ/ 6-րդ գ/ 7-րդ դ/ 9-րդ
8. Ե՞րբ է հիմնվել Սբ. Էջմիածնի տպարանը. 0,5 մ.
   ա/ 1669 թ. բ/ 1729 թ. գ/ 1771 թ. դ/ 1874 թ.
9. Ո՞ր գավառից է Անտոնիոսը սկսել իր պարթևական արշավանքը: 0,5 մ.
10. Ո՞ր դարում են բյուզանդացիները գրավել Մանազկերտը: 0,5 մ.
11. Ո՞վ է հաջորդել 686-689 թթ. իշխած Հայոց Աշոտ Բագրատունի իշխանին: 0,5 մ.
12. Որքա՞ն էր Դվինը զավթած և Բագավան գյուղ տեղափոխված արաբական կայազորի թիվը 774-775 թթ. հակաարաբական ապստամբության ընթացքում: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
    ա/ Նարամ Սուենի կառավարումը
    բ/ Նվարսակի պայմանագիրը
    գ/ Խեթական թագավորության առաջացումը
    դ/ Հայ(ա) երկրի հիշատակությունների սկիզբը միջագետքյան բնագրերում
    ե/ Արատտայի մասին առաջին հիշատակությունները
    զ/ Աքքադի պետության ստեղծումը
    է/ Հազարավուխտի անցնելը Եփրատ գետը
    ը/ Միտանիի թագավորության անկումը
    թ/ Վահան Մամիկոնյանի անցնելը Խաղտյաց երկիր

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)

1. Ֆրունզե Դովլաթյան	2. Ներսես Հովհաննիսյան	3. Երվանդ Քոչար
4. Հենրիկ Մալյան	5. Արտաշես Հովսեփյան	6. Մինաս Ավետիսյան
ա. «Հարսնացուն հյուսիսից»	բ. «Երկունք»	գ. «Ծնողներս»
դ. «Նահապետ»	ե. Ալեքսանդր Թամանյան	զ. Սասունցի Դավիթ

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ «Աստծո դարպասը» ուրարտական տաճարի տեսակ է, որի օրինակներից է «Միհրի դուռը»:

բ/ Բացի Երվանդ 2-րդից՝ դրամներ է հատել նաև Տիրիբազը:

գ/ Փոքր Հայքի միավորման հարցը Տիգրան 2-րդը կարող էր լուծել բանակցությունների միջոցով:

դ/ Տիգրան Մեծի տերությունը շատ գծերով հելլենիստական տերություն էր՝ նման Սելևկյան տերությանը:

ե/ Աշոտ 3-րդը, հարձակվելով Տփղիսի ամիրայության վրա, ջախջախեց Յուսուֆի կայազորը:

զ/ Արա Գեղեցիկ և Շամիրամ վիպերգի որոշ հատվածներ արտացոլվել են Արիստոտելի «Օրգանոն» աշխատությունում:

է/ 748-750 թթ. ապստամբության ընթացքում Աշոտը հեռանում է Տայք, իսկ Գրիգորին նենգորեն տեղեկացնում են, որ Աշոտը հարել է արաբներին:

ը/ Ըստ 591 թ. բաժանման՝ «Խորագոյն Հայք» նահանգն ընդգրկում էր Տուրուբերան նահանգի տարածքը:

թ/ 450 թ. հայկական գունդն անցնում է Կուրի աջ ափը և ազատագրում բուն Աղվանքի բերդերն ու քաղաքները:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)

ա/ Հայոց քրմապետը համարվում էր նաև արքայի գլխավոր խորհրդականը և թագաժառանգների դաստիարակը:

բ/ «Սահմանապահ կուսակալը» Վանի թագավորության արձանագրություններում հիշատակված գործակալությունների անվանումներից է:

գ/ Աքեմենյան կայսրության վարչական միավորները կոչվում էին մարզպանություն:

դ/ Մազդեզական կրոնի սպասավորները կոչվում էին մոգ:

ե/ Դարեհ 3-րդը նախքան պարսկական գահին բարձրանալը եղել է Հայաստանի թագավոր:

զ/ Զարգացած միջնադարում գերագույն քուրմը նաև արքայի գլխավոր խորհրդականն էր:

է/ Սարդուրի 1-ինն իր տերությանն է միացրել Դիաուխի երկիրը, որը հետագայի Տայք նահանգն է:

ը/ Արամազդը ռազմի, քաջության և ամպրոպի աստվածն էր և համադրվում էր Զևսին:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ Կրասոսը ծրագրել էր ջախջախել պարթևներին և հասնել Հնդկաստան:

բ/ Վոնոն Արշակունու և Էրատոյի գահակալումը չի ճանաչվել Հռոմի կողմից:

գ/ Մամլան ամիրան միայն մեկ անգամ է արշավել Հայաստան և պարտություն է կրել Ծումբի ճակատամարտում:

դ/ 3-րդ դարում Հայաստանում գյուղատնտեսության զարգացած ճյուղերից էին մեղվաբուծությունը, այգեգործությունը, երկրագործությունը, անասնապահությունը:

ե/ Մեհենագրական համակարգը բաղկացած էր 300 նշանից և գրվել է բացառապես վերից վար՝ առանց բառանջատման:

զ/ Ջրակունքների կամ արհեստական ոռոգման առուների մոտ կանգնեցվել են ձկնակերպ «Վիշապ» քարակոթողներ:

է/ «Արյան լճի» ճակատամարտից հետո թշնամին խուճապահար փախել է Վասպուրականից:

ը/ Հայաստանում պաշտել են նաև արմավենի, որի սաղարթների սոսափյունից Արմավիրի քրմերը հնում գուշակություններ էին կատարում:

թ/ 333-341 թթ. հայոց կաթողիկոսն էր Վրթանեսը՝ Արիստակեսի ավագ եղբայրը:

1	2	3

18. Գտե՛ք, նշե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ.

Սբ Գրիգորը, քարոզչության և ավետարանության գործը տարածելով Հայաստանում, արևմուտքում հասցնում է Սատաղ քաղաքից մինչև Խաղտյաց երկիր՝ Կղարջքի մոտ, հյուսիսում՝ Ալանաց դռները, արևելքում Ուրմիո լճի սահմանները, հարավում՝ Կորդուք գավառը, Նոր Շիրական երկիրը և Ատրպատական:

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

«...թող մեր աչքերը չտեսնեն մեր սրբարանների և մեր Աստուծո փառավորման վայրերի ոտից կոխան լինելն ու պղծվելը, այլ թշնամիների սուրը թող նախ և առաջ մեր դեմ ուղղվի... Մեր անձերը զոհենք ճշմարիտ հավատի փոխարեն և ոչ թե երկրավոր կյանքի սիրուն, քանզի այս ժամանակավոր մահվան դիմաց կա հավիտենական կյանք»:

ա. Ո՞վ է նշված խոսքերի հեղինակը:
բ. Ո՞ր ճակատամարտի ժամանակ է հնչել այս քաջալերանքը *(պատասխանում պետք է նշվեն կոնկրետ տեղանունը, թվականը, ամսաթիվը):*
գ. Ինչպե՞ս է կոչվում պատմիչի աշխատությունը:

20. Լրացրե՛ք տեքստում բաց թողնված հատվածները. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
Հայ նախարարները 571 թ. ապստամբում են ... (1) Մամիկոնյանի մյուս որդու՝ Վարդանի գլխավորությամբ: 572 թ. ...-ին (2) ապստամբները ազատագրում են Դվինը, կռվի ժամանակ սպանվում է մարզպան ...-ը (3):

21. Տրամաբանական խնդիր. 1 մ.
Եթե Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղումներից գտնված իրը 6800 տարեկան է, ո՞ր ժամանակաշրջանի ընթացքում է ստեղծվել (նշե՛ք կոնկրետ անվանումը):

22. Աշխատանք Մեծ Հայքի ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)
ա. Ո՞ր աշխարհն (նահանգն) է գունանշված:
բ. Ո՞ր աշխարհի հետ է այն ահմանակցում հարավ-արևմուտքում:

23. Ո՞վ է քանդակված լուսանկարում տրված քանդակի աջ կողմում. 0,5 մ.



24. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ (պատասխանե՛ք տրված հարցերին). 1 մ. (2 X 0,5 մ.)
ա. Հայոց պատմությանն առնչվող ո՞ր գործիչն է պատկերված 1908 թ. ծաղրանկարի կենտրոնում:
բ. Քաղաքական ո՞ր իրադարձությունն է ծաղրված այստեղ:

բ) Համաշխարհային պատմություն (10 միավոր)

1. Որտե՞ղ է կառուցվել առաջին զիկուրատը. 0,5 մ.
   ա/ Ուր բ/ Քիշ գ/ Ուրուկ դ/ Լագաշ
2. Ո՞ր եվրոպական երկրի տարածքն էր զբաղեցնում հռոմեական Դակիա նահանգը. 0,5 մ.
   ա/ Հունգարիա բ/ Մեծ Բրիտանիա գ/ Ռումինիա դ/ Իռլանդիա
3. Ե՞րբ է կայսր հռչակվել Լյու Բանը. 0,5 մ.
   ա/ Ք. ա. 146 թ. բ/ Ք. ա. 202 թ. գ/ Ք. ա. 246 թ. դ/ Ք. ա. 123 թ.
4. Ովքե՞ր էին վայշիները. 0,5 մ.
   ա/ քրմեր բ/ ստրուկներ գ/ զինվորականներ դ/ առևտրականներ
5. Ո՞վ է «Գոթերի պատմություն» աշխատության հեղինակը: 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)
   1. Բոկաչչո 2. Թովմա Աքվինացի 3. Վիլարդուեն 4. Ֆիլիպ դ՛Կոմինի
   ա. «Կոստանդնուպոլսի գրավումը» բ. «Դեկամերոն»
   գ. «Աստվածաբանության հանրագումար» դ. «Հուշագրություն»

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
   ա/ Աշշուր քաղաքը գտնվում էր Տիգրիս և Մեծ Զաբ գետերի միախառնման վայրում:
   բ/ Եփրատ և Տիգրիս գետերի առավելագույն մերձեցման վայրում ամորեական ցեղերը հիմնեցին Բաբելոնիան:

գ/ Սուբարտու պետությունը գտնվել է Միջագետքի հարավում:
դ/ Ք.ա. 18-17-րդ դդ. Հնդկաստան ներթափանցեցին խուռիական ցեղերը:
ե/ Եգիպտական քաղաքակրթությունը ձևավորվել է Աֆրիկայի հյուսիս-արևելքում՝ Նեղոս գետի վերին հոսանքի շրջանում:
զ/ Ք.ա. 449 թ. Շոշի պայմանագիրը կնքել է Սպարտայի դեսպան Կալիասը:
է/ Պելոպոնեսյան պատերազմների արդյունքում Սպարտան ընդունել է Աթենքի գերիշխանությունը:
ը/ Հնդկաստանի հնագույն բնակիչները դրավիդյան ցեղերն էին:

1	2	3

8. Թվարկում և ընտրանք. 2 մ. (4 X 0,5 մ.)
ա. Թվարկե՛ք՝ Հին Հունաստանի հայտնի քանդակագործներից 2-ին:
բ. Ընտրե՛ք հին հռոմեացիների կողմից առաջին անգամ կառուցված շինությունների տիպերից 2-ը. թատրոն, ջրանցք, սալահատակ, դամբարան, պարիսպ, տաճար, հիմնասյուն, ջրանցույց, բարձրաքանդակ, աղոթասրահ, հաղթակամար, բազիլիկ տաճար:

9. Աշխատանք քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)



ա. Միջնադարի ո՞ր պետությունն է պատկերված քարտեզում:
բ. Ո՞ր քաղաքն է աստղի նշանով ֆիքսված նրա կենտրոնում:

10. Միջնադարի ո՞ր նշանավոր արքայի պատկերն է ստորև տրված. 0,5 մ.

11. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ. 1,5 մ. (3 X 0,5 մ.)



Le tsar Nicolas II proclame l'alliance franco-russe à bord du *Pothuau*.

ա. Ո՞ր պետությունն է խորհրդանշում աջ կողմում պատկերված անձը:
բ. Համաշխարհային պատմության աղետալի ո՞ր իրադարձությանն է նախորդում պատկերված դեպքը:
գ. Ո՞ր ռազմաքաղաքական դաշինքի ընդլայնումն է խորհրդանշում ծաղրանկարը:

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

06.03.2024 թ.